

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ԴԻՄՈՒՄԱՏՈՒ՝

ԱՐԱՅԻԿ ՄԻՔԱՅԵԼԻ ԶԱԼՅԱՆ

Անձնագիր՝ AN0752224, տրված 18.12.2013թ., 066-ի կողմից
Հաշվառված՝ ՀՀ քաղաք Վանաձոր Ներսիսյան նրբանցք 6/40,
Ծանուցման հասցե՝ ՀՀ ք. Վանաձոր Տիգրան Մեծի 59

Պատճենը՝

1. ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան
Հասցե՝ ք. Երևան Գ. Նժդեհի 23
2. ՀՀ գլխավոր դատախազություն
Հասցե՝ ք. Երևան Վազգեն Սարգսյան 5
3. ՀՀ քննչական կոմիտե
Հասցե՝ ք. Երևան Մամիկոնյանց 46/5
4. Մուսա Արտաշի Սերոբյան
Հասցե՝ ք. Գյումրի՝ Մ. Ավետիսյան Փ. 29 37
5. Ռազմիկ Թորգոմի Սարգսյան
Հասցե՝ ք. Գյումրի Ղանդիլյան 1 Նրբ. 14
6. Մովսես Մկրտումյան
Հասցե՝ ք. Երևան Վարդաշեն 12 Փ. 43
7. Արթուր Եղիազարյան
Հասցե՝ Արագածոտնի մարզ, գ. Ակունք

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔ

(ՀՀ քրեական եւ զինվորական գործերով նախկին վերաքննիչ դատարանի կողմից 2006թ. մարտի
14-ին կայացված որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու
պահանջի մասին)

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1.1. 2005թ. դեկտեմբերի 12-ին, Արայիկ Զալյանի, Մուսա Սերոբյանի և Ռազմիկ Սարգսյանի կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին՝ մանրամասն պնդումներ ներկայացնելով այն մասին, որ 2004 թվականի ապրիլի 19-ից մինչև 24-ը իրենք ապօրինաբար զրկվել են ազատությունից, և իրենց նկատմամբ ցուցաբերվել է վատ վերաբերմունք՝ հարկադրելու տալ խոստովանական ցուցմունքներ:

1.2. 2005թ. դեկտեմբերի 26-ի պատասխան գրությամբ գլխավոր դատախազությունը հայտնել է, որ դիմումատուների դեմ հարուցված քրեական գործի դատական քննության ժամանակ Սյունիքի մարզի դատարանը, ղեկավարվելով Քր. դատ. օր.-ի 17-րդ հոդվածի 4-րդ մասով, ձեռնարկել է անհրաժեշտ միջոցներ ստուգելու նրանց հայտարարություններն այն մասին, թե նրանք քննության ժամանակ քննիչների կողմից ենթարկվել են հարկադրանքի, և դրանք իր 2005 թվականի մայիսի 18-ի դատավճռով համարել է անհիմն:

1.3. 2006թ. հունվարի 8-ին դիմումատուները դիմում են ներկայացրել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ Քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի համաձայն՝ բողոքելով, որ դատախազությունը, հիմնվելով Սյունիքի մարզի դատարանի իրականացրած քննության վրա, մերժել է քրեական գործ հարուցել: Սակայն, Սյունիքի մարզի դատարանն իրավասու չէր իր կողմից քննվող քրեական գործի սահմաններից դուրս քննություն իրականացնել: Վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների մասով արդյունավետ քննություն իրականացնելու համար անհրաժեշտ էր հարուցել քրեական գործ՝ Քր. դատ. օր.-ի 181-րդ հոդվածի համաձայն: Ներկայացված դիմումով դիմումատունը դատարանից պահանջել են գլխավոր դատախազության պարտավորեցնել քրեական գործ հարուցել:

1.4. 2006թ. փետրվարի 1-ին՝ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը մերժել է ներկայացված դիմումը, գտնելով, որ գլխավոր դատախազի պատասխանը եղել է օրենքին համապատասխան և չի խախտել դիմումատուների իրավունքները: Առաջին ատյանի դատարանը, մասնավորապես, նշել է, որ քրեական վարույթի ընթացքում օրինականության ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքները, Քր. դատ. օր.-ի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, պետք է մանրակրկիտ քննվեն գործն ըստ էության քննող մարմնի կողմից, մինչդեռ հանցագործության մասին դատական նիստի ընթացքում արված հայտարարությունները, Քր. դատ. օր.-ի 177-րդ հոդվածի համաձայն, պետք է մտցվեն դատական նիստի արձանագրության մեջ:

1.5. 2006թ. փետրվարի 14-ին դիմումատուները վերաքննիչ բողոք են ներկայացրել՝ բերելով 2006 թվականի հունվարի 8-ի՝ իրենց բողոքում հնչեցրած փաստարկներին համանման փաստարկներ:

1.6. 2006թ. մարտի 14-ին նախկին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել առաջին ատյանի դատարանի որոշումը՝ գտնելով, որ վատ վերաբերմունքի մասին դիմումատուների հայտարարությունները քննվել են Սյունիքի մարզի դատարանում իրականացված վարույթի ընթացքում, և ձեռք բերված ապացույցները գնահատվել են կայացված դատավճռով:

1.7. 2006թ. մարտի 28-ին դիմումատուները ներկայացրել են վճռաբեկ բողոք՝ համանման փաստարկներ բերելով: Նրանք նաև բողոք են ներկայացրել այն մասին, որ իրենց դատավարական իրավունքները խախտվել են, քանի որ իշխանությունները հրաժարվել են կատարել Քր. դատ. օր.-ի 180-րդ և 181-րդ հոդվածների պահանջները:

2. Դատական ակտի վերանայման համար հիմք հանդիսացող նոր հանգամանքը

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. փետրվարի 1-ին՝ բողոքը մերժելու մասին որոշման օրինականության եւ հիմնավորվածության հարցը, 2006թ. մարտի 14-նի որոշմամբ առաջին ատյանի դատարանի նշված որոշումը թողել է անփոփոխ, իսկ դրա դեմ ներկայացված բողոքը առանց բավարարման:

ՀՀ քրեական եւ զինվորական գործերով նախկին վերաքննիչ դատարանի 2006թ. մարտի 14-ի վերոհիշյալ որոշումը ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության